ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

08.05.2026թ. ԿՆՔՎԱԾ N «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-26/05»-1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «05» հունիսի 2026թ.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրենի պարտականությունները կատարող Հայկ Հայրապետյանի (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սարիբեկ Ադամյան» Ա/Ձ-ն, ի դեմս տնօրեն Սարիբեկ Ադամյանի (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով 08.05.2026թ. Կողմերի միջև կնքված N «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-26/05»-1 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 8.5 և 8.8 կետերով, և հիմք ընդունելով «Սարիբեկ Ադամյան» Ա/Ձ-ի կողմից 01.06.2026թ. ներկայացված գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրով սահմանված ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգել 10 օրացուցային օրով և Պայմանագրի կատարման վերջնաժամկետ սահմանել 17.06.2026թ.:

2. Այլ պայմաններ

2.1. Պայմանագրի մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ	Սարիբեկ Ադամյան Ա/Ձ
Հասցե՝ ք. Երևան, Զ. Անդրանիկի 1	Հասցե՝ ԽՈՒԴՅԱԿՈՎԻ Փ. / Շ / 70 / 9
«Արդշինբանկ» ՓԲԸ,	ԱՎԱՆ 0060 ԵՐԵՎԱՆ
Հ/Հ 2470139122970010	Արարատ բանկ
ՀՎՀՀ 01522459	Հ/Հ 1510029713167100
Գլխավոր տնօրենի	ՀՎՀՀ 26027339
պարտականությունները կատարող	
Հ. Հայրապետյան	Ս. ԱԴԱՄՅԱՆ
Ստորագրություն	Ստորագրություն
Կ.Տ	Կ.Տ.